«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝** Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը

**Դաստիարակ՝** Նունե Աֆյան

**Մանկապարտեզ՝** Չարենցավանի Ա.Գրիգորյանի անվան «Ծիծեռնակ» մսուր- մանկապարտեզ ՀՈԱԿ

2023թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ..... 2
Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն ..... 3

ԳԼՈՒԽ 1 ..... 5

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ..... 5
1.1 ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ ..... 5
1.2 ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 7
1.3 ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 8

ԳԼՈՒԽ 2 ..... 11

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ..... 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... 15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..... 16

# Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մարդը չի կարող ազատ լինել, եթե ինքնուրույն չէ:
Այդ իսկ պատճառով երեխայի անհատական ազատության
դրսևորումները պետք է այնպիսի ուղղվածություն ունենան,
որ ակտիվությունը մշակի նրա ինքնուրույնությունը:
Մոնտեսսորի

Երեխաներն ունեն իրականությունը ընկալելու իրենց ուրույն ձևը: Նրանց աշխարհը անկրկնելի է և մեծապես տարբերվում է մեծահասակների աշխարհից: Քսաներորդ դարի իտալացի մանկավարժ, բժիշկ հասարակական գործիչ Մ. Մոնտեսսորին երեխայի մտածողությունը համեմատում է այն սպունգի հետ, որը ներքաշում է ցանկացած ջուր՝ մաքուր կամ կեղտոտ, թափանցիկ կամ ներկված: «Իմ մանկավարժության հիմնավորումը» հոդվածում նա գրում է. «Միայն երեխան է կառուցում իր անձնավորությունը՝ ելնելով սեփական ներուժի հնարավորություններից: Զարգացման աղբյուրը երեխայի մեջ է: Այն ի վերուստ է տրված: Երեխան աշխարհում գործելու ընդունակություն է ձեռք բերում: Որպես ճանապարհորդ՝ նա անծանոթ երկրում պարտավոր է կողմնորոշվել, ուսումնասիրել շրջապատող միջավայրը և հետևել ընդհանուր օրենքներին»:

Մեծահասակի հիմնական խնդիրն է ստեղծել այնպիսի միջավայր, որը կնպաստի երեխայի ինքնուրույն, ստեղծարար և նախաձեռնող հատկությունների զարգացմանը: Նրանց մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության զարգացումը էապես կախված է մեծահասակներից, որոնք շրջապատում են երեխային:

Ինչպես նշել է Ռ. Շտայները՝ մինչև դպրոցական տարիքին հասնելը երեխայի համար կարևոր է ոչ այնքան այն, թե ինչ է տրվում, այլ այն, թե ինչպես է տրվում[1]:

Հետևաբար, թե՛ վաղ տարիքում և թե՛ նախադպրոցական տարիքում երեխայի մեջ ձևավորվող ինքնուրույնության, նախաձեռնողականության, ստեղծագործելու կարողություններին ճիշտ ընթացք ապահովելը առաջնային խնդիր է դառնում: Այդ առումով ժամանակակից մանկավարժության մեջ տեղի են ունենում կտրուկ

[1] Р. Штайнер. Познание человека и учебный процесс. Ереван, 1998г.

փոփոխություններ, որոնք պահանջում են լրջագույն պատասխանատվություն և նրբությունների կիրառում նշված խնդրի արդյունավետ իրագործման համար:

Այս հետազոտական աշխատանքի թեման ընտրելիս նպատակ եմ դրել ուսումնասիրել երեխաների ինքնուրույնության, ստեղծագործական մոտեցումների, նախաձեռնող ունակությունների առանձնահատկությունները: Բացի այդ, անհրաժեշտ եմ համարել վերլուծել հետևյալ կարևոր հարցերը.

- ✓ Ուսումնասիրել այն մոտեցումները, որոնք խթանում են ինքնուրույնության, նախաձեռնողականության, ստեղծագործելու ունակությունները,
- ✓ Առանձնացնել այն խնդիրները, որոնք կարող են առաջանալ այդ միջոցների ներդրման գործընթացում,
- ✓ Կիրառել նոր մեթոդներ և եղանակներ նշված գործառույթները իրականացնելու համար:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է վերը նշված հանգամանքներով, քանի որ հիշյալ գործընթացները երեխաների մեջ պետք է խթանել քայլ առ քայլ՝ տարիքային խմբին համապատասխան՝ հաշվի առնելով երեխայի տարիքային ընդհանուր զարգացման, սոցիալական, հուզական, բարոյակամային որակների և ընդհանուր կարողությունների առանձնահատկությունները, իսկ գործընթացները իրականացնել՝ կիրառելով ժամանակակից մոտեցումներ և մեթոդներ:

# ԳԼՈՒԽ 1

# ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մանկավարժական հանրությունն այսօր իր ուշադրությունը կենտրոնացրել է երեխայի վաղ մանկության զարգացման առանձնահատկությունների վրա, մանկությունը՝ որպես մարդու զարգացման էական փուլ: Առաջատար մանկավարժական միտքը միշտ հավատացել է, որ երեխաները պետք է հնարավորինս ինքնուրույն աշխատեն, իսկ մանկավարժը պետք է ուղղորդի նրանց աշխատանքը, նյութեր տրամադրի, ստեղծի նպաստավոր միջավայր:

Հարկավոր է երեխաներին զինել գիտելիքներով, որպեսզի նրանց մեջ ձևավորվի նշված որակները: Ականավոր մանկավարժ Ֆրենեն առաջարկում է ոչ թե որոշել՝ ինչ է պետք երեխային, այլ ուսումնասիրել նրանց հետաքրքրություններն ու հնարավորությունները, քանի որ «աշխարհն իրենցն է», և նրանք պետք է կարողանան հետևել իրենց ներքին հնարավորություններին ու կարողություններին, և ապրեն ինքնուրույն: Երեխան սիրում է բնությունը, շարժումը, իսկ մենք ստիպում ենք անշարժ նստել[2]:

Սույն հետազոտական աշխատանքում անդրադառնամ սաների ինքնուրույնության, ստեղծագործական մոտեցումների, նախաձեռնող ունակությունների առանձնահատկություններին առավել մանրամասն:

## 1.1 ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ

Ինքնուրույնությունը երեխաների մոտ ձևավորվում է աստիճանաբար: Մարդն իր ծնված օրվանից ձգտում է ինքնուրույնության: Կարևոր է չխանգարել տվյալ որակի ձևավորմանը: Տարբեր տարիքային փուլերում երեխան փորձում է մի շարք գործողություններ կատարել ինքնուրույն, և եթե մենք չենք խանգարում այս որակի

[2] Վարդումյան Ս. և այլք, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: XX դարի մանկավարժական տեսություններ, Երևան 2005, էջ 23:

զարգացմանը, ապա արդյունքում ունենում ենք արդեն կայացած անձ, ով գիտակցում է՝ ինչ է ցանկանում, ինչ է իրեն անհրաժեշտ:

Ինքնուրույնությունը բնությունից տրված որակ է, որը հարկավոր է դաստիարակել վաղ մանկությունից: Անհրաժեշտ է հիշել, որ երեխայի համար պետք չէ իրականացնել այն, ինչը նա կարող է անել ինքնուրույն: Երեխային պետք է օգնել միայն այն դեպքում, երբ ինքն է մեծահասակից օգնություն խնդրում: Եթե չկա անհրաժեշտություն, պետք չէ միջամտել երեխայի ինքնուրույն նախաձեռնությանը: Կարևոր է հնարավորություն տալ նրան ինքնուրույն լուծումներ գտնել: Անհրաժեշտ է խրախուսել երեխայի ինքնուրույնության ցանկությունը, սակայն ամբողջի համատեքստում պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք ևս. պաշտպանել երեխային հնարավոր վտանգներից:

Բոլոր ժամանակներում երեխայի ինքնուրույնության զարգացման բաղադրիչը եղել է մանկավարժ-գիտնականների ուսումնասիրության առարկան:

Այսպես՝ Մ. Ա. Դանիլովի տեսության համաձայն՝ ինքնուրույնությունը անհատի անհատական հատկություններն են, այսինքն՝ ինքնուրույն մտածելու ցանկություն և կարողություն, նոր իրավիճակում ելք գտնելու ունակություն, նոր առաջադրանքի լուծումը գտնելու հնարավորություն. ցանկություն ոչ միայն հասկանալու ձեռք բերված գիտելիքները, այլև այն ձեռք բերելու մեթոդները, սեփական դատողության ինքնուրույնությունը:

Ի. Ն. Կրալևիչի և Վ. Ի. Սելիվանովի սահմանման համաձայն՝ ինքնուրույնությունը անհատի կամքի որակն է, որն արտահայտվում է իր կրթական աշխատանքում և սոցիալական գործունեությունը գիտակցաբար ուղղելու ունակության մեջ, նրա պահվածքում, ըստ սեփական հայացքների և համոզմունքների՝ հաղթահարելով այդ նպատակին հասնելու խոչընդոտները:

Վերը նշված տեսական մեկնաբանություններից զատ, պետք է նշել, որ փորձը ցույց է տալիս, որ երեխայի ինքնուրույնության ճիշտ զարգացումը պայմանավորված է նաև մանկապարտեզ-ընտանիք գիտակցված համագործակցությունով: Ստացվում է, որ ինքնուրույնությունը ենթադրում է տվյալ դեպքում սանի վերաբերմունքը սեփական արարքների հանդեպ. ցանկացած իրավիճակում գործել գիտակցված և նախաձեռնող:

## 1.2 ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ինքնուրույնությունը, այնպես էլ նախաձեռնողականությունը երեխաների մոտ ձևավորվում է վաղ տարիքից: Նախաձեռնողականությունը նորարարությունների տանող մտքերի սկզբնաղբյուրն է: Փորձելով գործել ինքնուրույն՝ երեխան բոլոր իրավիճակներում հանդես է բերում նախաձեռնողականություն: Մանկական գործունեության ցանկացած ձև պարունակում է նախաձեռնողականության որոշակի տարր:

Երեխաների նախաձեռնողականությունը դրսևորվում է նրանց ազատ գործունեության մեջ՝ ըստ իրենց ընտրության և հետաքրքրությունների ոլորտի: Այն ենթադրում է սեփական հետաքրքրություններին համապատասխան խաղալու, նկարելու, ձևավորելու, ստեղծագործելու և այլնի հնարավորություն: Նախաձեռնողականությունը նոր բանի ներքին մղումն է դեպի փոփոխություն և շարժում:

Նախաձեռնողականության հատկության զարգացման արդյունքում երեխան պետք է կարողանա նոր պայմաններում դրսևորել իր գիտելիքները, գտնել իրավիճակից դուրս գալու ելքեր: Հաճախ հասնելով որոշակի հաջողությունների՝ սաները դրսևորում են ավելիին հասնելու մղումներ: Արդյունքում նրանց մեջ առաջանում են դրական հույզեր, զգացմունքներ:

Նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույնության և նախաձեռնողականության բաղադրիչներն են.

- Գիտելիքի և հմտության փորձի ձեռքբերում,
- Մտքի, մտածողության ճկունություն:

Իսկ այս բաղադրիչների ձևավորման համար հարկավոր է կիրառել նոր մեթոդներ, քանի որ երեխաների նշված որակները զարգացման կարիք ունեն:

Նախադպրոցական տարիքի երեխաների նախաձեռնողականության հատկության զարգացման համար հարկավոր է հետևել նշված կանոններին.

- Պետք չէ ծանրաբեռնել երեխային
- Ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորություն տալ
- Թեթևացնել վերահսկողությունը

- Աջակցել նախասիրություններին
- Գտնել և նշել երեխայի ուժեղ կողմերը
- Ցույց տալ երեխային, որ մենք սիրում ենք նրան նույնիսկ անհաջողությունների դեպքում:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ նախաձեռնող երեխան գիտի ինքնուրույն նպատակներ դնել և կազմակերպել իրեն այնպես, որ հասնի դրանց:

## 1.3 ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երեխաների ստեղծագործական մտածողությունը հեշտ է զարգացնել փոքր տարիքային խմբերում մինչև նրանց դպրոց հաճախելը: Նոր ու անսովոր առաջադրանքներ տալով՝ երեխաները դառնում են ստեղծագործող, տուրք են տալիս իրենց երևակայությանը:

Ստեղծագործող անձ. այս հասկացությունը ներառում է այնպիսի որակներ, ինչպիսիք են մտքի ճկունությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, ամենաանհնարին իրավիճակներից ելք գտնելու ձգտումը և կարողությունը:

Մոնտեսսորիի մի շարք աշխատություններում նշվում են այն սկզբունքները, որով զարգանում են երեխաների ստեղծագործական ունակությունները վաղ տարիքից: «Երեխան պետք է սովորի իր անհատական ակտիվության միջոցով»: Այսինքն՝ երեխային տալով այդ հնարավորությունը՝ նպաստում ենք նրա հետաքրքրությունների, բնավորությունների և մտավոր կարողությունների զարգացմանը, որն էլ իր հերթին հանգեցնում է երեխայի ստեղծագործ ունակությունների կատարելագործմանը:

Հարկավոր է երեխաների մոտ ձևավորել այնպիսի հմտություններ, որպեսզի ստեղծագործական հակումները դառնան ստեղծագործական մոտեցումներ: Ինչպես նշում է Վ. Վ. Դավիդովը՝ «Նախադպրոցական տարիքը ինքնագնահատվող է… այն երեխային թույլ է տալիս իրականացնել ազատ գործունեության տարբեր տեսակներ՝ խաղ, նկարչություն, լսել հեքիաթներ, պատմվածքներ, կառուցել, օգնել մեծերին տանը և այգում»: Թվարկված գործունեության տեսակները չունեն խիստ կանոններ, որոնք էլ նպաստում են երեխաների ստեղծագործ ունակությունների առաջընթացին: Գործունեության բազմազանությունը երեխաներին տալիս է բավականին շատ գիտելիքներ, կարողություններ, նույնիսկ հմտություններ, զարգացնում է նրանց

մտածողությունը, երևակայությունը, հիշողությունը, ուշադրությունը, զգացմունքները, կամքը, բարոյական հատկությունները, հասակակիցների և մեծերի հետ շփվելու ձգտումը:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում սաների ստեղծագործականության խթանման գործում կարևոր նախապայման է դաստիարակի ազդեցությունը նրանց մտածողության գործընթացի վրա: Դաստիարակը հանդիսանում է երեխայի գործընկերը, համագործակիցը: Եվ որպեսզի քայլ առ քայլ ձևավորվի երեխայի երևակայությունը ստեղծագործելու գործընթացում՝ պետք է հնարավորություն տալ երեխային մտածել ինքնուրույն, արտահայտել սեփական տեսակետը:

Նախադպրոցական հաստատություններում երեխաներին տրված են ստեղծագործելու մեծ հնարավորություններ, սակայն այն իրագործելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել զարգացնող միջավայր, որը երեխային հնարավորություն կտա ինքնահաստատվելու, քանզի նրանք մշտապես հետազոտում և երևակայում են:

Կրտսեր խմբի երեխաներին պետք է ծանոթացնել ձևի և գույնի գործոններին, և թույլ տալ նրանց աշխատել նյութերի, մատիտների, ներկերի, ծեփանյութերի հետ, ուսումնասիրել դրանք:

«Յուրաքանչյուր երեխա մի առանձին աշխարհ է՝ իր վարքագծով և օրենքների ժողովածուով: Մեր՝ մեծահասակներիս հիմնական խնդիրն է՝ օգնել երեխաներին գտնելու իրենց աշխարհում և աշխարհը իրենց մեջ»[3] : Ստացվում է, որ երեխաների ստեղծագործական կարողությունները առավել արդյունավետ են դրսևորվում զարգացնող միջավայրում:

Երեխաների հետ աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ նրանց նախաձեռնողականության, ինքնուրույնության և ստեղծագործելու կարողությունները զարգացնելու նպատակով կարելի է առանձնացնել մի քանի խնդիրներ՝

- ✓ Երեխայի ինքնաարտահայտվելու զարգացում,
- ✓ Երեխայի ստեղծագործական ունակությունների և ինքնուրույնության զարգացում,
- ✓ Գեղագիտական ճաշակի զարգացում,
- ✓ Ազատ և անկաշկանդ շփում հասակակիցների և մեծերի հետ,

[3] Ա. Ս. Մակարենկո: Դասախոսություններ երեխաների դաստիարակության մասին: 1937 թ.

- ✓ Տեսածը և լսածը վերարտադրելու կարողունակություն:

## ԳԼՈՒԽ 2

## ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Նախադպրոցական տարիքի երեխաների ստեղծագործական կարողությունները՝ ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը, զարգացնելու գործընթացում կարևոր են գործունեության բոլոր ձևերը՝ կերպարվեստ, աշխատանքային դաստիարակություն, խաղեր, ինչպես նաև մի շարք պարապմունքների կազմակերպումը՝ նոր մեթոդների կիրառմամբ:

Ինտեգրված պարապմունք. Խոսքի զարգացում և նկարչություն

Խումբը՝ կրտսեր երկրորդ խումբ

Թեմա՝ «Գրքին հյուր» (ռուսական ժողովրդական հեքիաթ «Ոսկե ձվիկը»)

Տևողությունը՝ 30 րոպե

Պարապմունքի նպատակը՝

- Ծանոթացնել գրքին:
- Սովորեցնել ճիշտ բռնել և թերթել գիրքը:
- Սովորեցնել նոր բառեր՝ ձվեղեն, ոսկեղեն:
- Զարգացնել միմյանց հետ խոսելու, լսելու հմտությունները:
- Զարգացնել պատմելու հմտությունները:
- Դաստիարակել հետաքրքրություն դեպի գիրքը:

Ուսուցման կազմակերպման ձևեր

- Ցուցադրում
- Դիտում
- Քննարկում
- Աշխատանք փոքր խմբերով
- Ստեղծարար

Անհրաժեշտ նյութեր

Ցուցադրական՝ մանկական նկարազարդ գրքեր

Բաշխիչ նյութեր՝ Ա4 թղթեր, գունավոր մատիտներ, հեքիաթի հերոսների նկարների ուրվագծեր:

Ունենալ աքաղաղի և հավի դիմակ:

Պարապմունքի ընթացքը

Խթանման փուլ

Երեխաներին հայտնել, որ այսօր գնալու ենք գրքին հյուր: Խմբել երեխաներին գրքի կենտրոնում, ցուցադրել մանկական նկարազարդ գրքեր, ցույց տալ, թե ինչպես են բռնում գիրքը, թերթում այն: Հայտնել երեխաներին, որ առանձնացրել եմ ռուսական ժողովրդական «Ոսկե ձվիկը» հեքիաթի նկարազարդ գիրքը: Երեխաներին նստեցնել շրջանաձև, ցույց տալ գիրքը, կազմը, անվանել հեղինակին և հեքիաթի անվանումը: Հերթով թերթել էջերը և ցույց տալ նկարները:

Իմաստի ընկալման փուլ

Երեխաները մնում են շրջանաձև նստած:

Ընթերցել գեղարվեստական ստեղծագործությունը: Ընթերցելու ընթացքում յուրաքանչյուր կերպարի մասին կարդալիս փակցնել նախօրոք պատրաստած համապատասխան նկարը: Ընթերցումը ավարտելուց հետո քննարկման միջոցով ամփոփել: Հարցնել երեխաներին.

-Ինչպե՞ս էր կոչվում ստեղծագործությունը կամ հեքիաթը:

-Ի՞նչը դուր եկավ այս հեքիաթում:

-Ի՞նչ սովորեցիք այս հեքիաթից:

-Ի՞նչ նոր բառեր լսեցիք:

Բացատրել ոսկեղեն, ձվեղեն բառերի իմաստը:

Հարցերին պատասխանում են երկուսից երեք երեխա:

Ֆիզկուլտդադար

Ծափ ենք տալիս ձեռքերով,

Հարվածում ենք ոտքերով,

Բարձրացնում ենք ձեռքերը,

Թափահարում գլուխը,

Ձեռքերը մեր իջեցնում ենք,

Ձեռքերը մեր թաքցնում ենք,

Եվ վազում ենք մեր շուրջը:

Կշռադատման փուլ

Նախօրոք սեղաններին դնել հեքիաթի հերոսների նկարների ուրվագծերը և գունավոր մատիտները:

Երեխաներին հանձնարարել, որ գունավորեն իրենց նախընտրած հերոսին:

Խրախուսել երեխաներին և առաջարկել ցույց տալ միմյանց իրենց աշխատանքները:

Ապա առաջարկել, որ դասավորեն նկարները՝ ըստ հերթականության:

Երեխաները հերթականությամբ դասավորած նկարները միացնում են իրար և պատրաստում գիրք:

Իրենց պատրաստած գիրքը դնում են գրքի կենտրոնում:

Պարապմունքի ավարտից հետո խաղալ աշխուժացնող խաղ «Աքաղաղը, հավն ու ճուտերը»: Երեխաներից ընտրվում են «հավն» ու «աքաղաղը», մյուսները «ճուտիկներ» են: «Հավն» ու «ճտերը» պտտվում են աքաղաղի շուրջը. «հավը» կանչում է՝ կու՛տ, կու՛տ, կու՛տ, իսկ «ճտերը»՝ ծի՛վ, ծի՛վ… Հետո «հավն» «աքաղաղին» հարցնում է.

-Աքաղա՛ղ, աքաղա՛ղ, ի՞նչ ես անում:

-Հավաբույն եմ շինում:

-Ու՞մ համար:

-Ճուտիկներիս:

-Բայց դրանք իմն են:

-Քոնն էին, կդառնան իմը:

«Աքաղաղը» փորձում է ամեն գնով փախցնել «ճուտիկներից» մեկին, որոնք իրար հետևից շարվում են «հավիկի» հետևից՝ գրկելով միմյանց գոտկատեղից: Իսկ «հավ-մայրիկը» պաշտպանում է «ճուտիկներին»: Եթե «աքաղաղին» հաջողվում է փախցնել «ճուտիկներից» մեկին, ապա «հավն» ու «աքաղաղը» փոխվում են դերերով:

Վերջնարդյունքներ

- Պատասխանեն հարցերին
- Խոսքում կիրառեն պարզ ընդարձակ և համառոտ նախադասություններ
- Ձևակերպեն և արտահայտեն սեփական մտքերը
- Կատարեն պարզ հրահանգներ և առաջադրանքներ
- Օգտագործեն նկարելու պարագաներ

- Մասնակցեն խաղին և խաղային իրավիճակներին

Կապը չափորոշիչի հետ

Շարժողական ոլորտ

Գիտեն շարժախաղի անվանումը:

Խոսքի և հաղորդակցության ոլորտ

Ընկալում են ուրիշի բանավոր խոսքը և տալիս համարժեք պատասխաններ:

Իմացական ոլորտ

Մտապահում և վերարտադրում են ներկայացվող որոշակի տեղեկատվությունը:

Դրսևորում են հասակակիցների հետ համատեղ գործելու ցանկություն:

Կենտրոնացնում են ուշադրությունը առաջադրանքի, խաղի կանոնների պահպանման վրա:

Դիտարկում

Պարապմունքը պլանավորված էր, ձևակերպված էին պարապմունքի փուլերը, և պարապմունքի ընթացքում պահպանվել էին փուլերի հերթագայությունը: Դիտողական նյութերը բազմազան էին, որոնք ապահովում էին երեխաների ուշադրության կենտրոնացում և հետաքրքրասիրություն: (Տնօրեն՝ Լ. Ազարյան)

Պարապմունքը կազմակերպված էր, դաստիարակի խոսքը գրագետ էր, էմոցիոնալ, արտահայտիչ և մատչելի: Ստեղծված էր զարգացնող միջավայր, և պարապմունքի ընթացքում հնարավորություն տրվեց երեխաներին բացահայտելու իրենց ստեղծագործելու կարողությունները, երևակայությունը և ինքնուրույնությունը: Դաստիարակը ապահովում էր հետադարձ կապը յուրաքանչյուր երեխայի հետ: (Մեթոդիստ՝ Ռ. Սահակյան)

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ուսումնասիրելով թեմատիկ մանկավարժական գրականությունը, ժամանակակից մանկավարժների աշխատությունները և հենվելով սեփական աշխատանքային գործունեության ընթացքում ձեռքբերած փորձի վրա՝ կարող եմ եզրակացնել, որ յուրաքանչյուր երեխա օժտված է ստեղծագործելու, նախաձեռնելու, ինքնուրույնություն դրսևորելու կարողություններով: Եվ որպեսզի էլ ավելի զարգանան այդ կարողությունները, երեխայի համար պետք է ստեղծել նպաստավոր պայմաններ, որոնց պարագայում նրան հնարավորություն է տրվում ազատ գործելու, ձեռք բերելու նոր գիտելիքներ: Միևնույն ժամանակ երեխային տալով ազատ գործելու և շփման հնարավորություն՝ նրա մոտ վերանում է անհատապաշտությունը և ձևավորվում է համագործակցելու կարողություն: Այս պարագայում կարևոր է նաև դաստիարակի դերը, ով երեխային պետք է ներկայանա որպես նրա հետ հավասարի, ով ունի իր սեփական ցանկություններն ու հետաքրքրությունները: Նշված որակների զարգացման կարևոր պայման է ազատ ժամանակ զբաղվելու նրանց սիրած զբաղմունքով: Երեխաների պահանջմունքների ու շահերի բավարարման հարմարեցումը տարաբնույթ գործոններին հնարավորություն է տալիս զարգացնել ինքնուրույնության, ստեղծագործելու և նախաձեռնողականության կարողությունները:

Վերը նշված որակների զարգացման համար նպատակահարմար է կիրառել նաև նորագույն մեթոդներ և տեխնոլոգիաներ, նոր հնարներ և մոտեցումներ՝ խմբային և անհատական աշխատանքներ կատարելով երեխաների հետ:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1) Վարդումյան Ս., Հարությունյան Լ. Ջաղինյան Ն., Վարելլա Գ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ: Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան 2005, էջ 23:
2) Ա. Ս. Մակարենկո: Դասախոսություններ երեխաների դաստիարակության մասին: 1937 թ.:
3) М. Монтессори. Дом ребенка. Метод научной педагогики. Пер. с итал. С.Г. Займовского, доп. по англ. и амер. изд. со введ. проф. Гарвард. ун-та Генри Гольмса. –М.: Задруга, 1913 г.
4) Р. Штайнер. Познание человека и учебный процесс. Ереван, 1998г.
5) Дошкольное воспитание, 2010-2012
6) Ինտերնետային կայք՝ https://doshkolnoe.org/